ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2-30

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Արտաշես Ջավադյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 198914.5 հազ. (մեկ հարյուր իննսունութ միլիոն ինը հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները

որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները.

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրակա-նացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց.

2.2.4. ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշ-վետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը.

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ.

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում.

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ.

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ.

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ՝ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ.

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 198914.5 հազ. (մեկ հարյուր իննսունութ միլիոն ինը հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 183001.3 հազ. (մեկ հարյուր ութսուներեք միլիոն հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է

հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս.

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն

իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24
«Արարատ բանկ» ԲԲԸ

Հ/հ 1510005175820100
ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)
Կ. Տ.
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ
ք. Երևան, Իսակովի 24
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/հ 1930003316710100
ՀՎՀՀ 01836525

Տնօրեն՝ Ա. Ջավադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1
«27» 01 2015թ.
N 2-30 պայմանագրի

Առաջադրանք

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության

ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի

/ծրագրի անվանումը/

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե

2. Աշխատանքի նպատակը՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի գործունեության՝ փորձագիտության բնագավառում գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական, գիտաուսումնական աշխատանքների կատարման ապահովմանը նպատակաուղղված միջոցառումների իրականացումը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջներն ըստ էության համապատասխանում են կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված գործունեության առանձին նպատակներին.

-իրավասու մարմինների կողմից նշանակված փորձաքննությունների ապահովմանն ու բարելավմանը նպատակաուղղված գիտահետազոտական, գիտատեխնիկական, գիտափորձնական աշխատանքների կազմակերպում և իրականացում,

-դատական փորձագիտական հետազոտությունների մեթոդական միասնականությունն ապահովելու նպատակով հետազոտությունների գործող մեթոդիկաների համակարգում, նորերի մշակում, դրանց փորձարկում և գործածության համար երաշխավորում,

-հանցավորություն ծնող պատճառների ու պայմանների ուսումնասիրում, հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումների մշակում և իրավասու մարմինների համար վերջիններիս ներդրման հետ կապված համապատասխան առաջարկությունների նախապատրաստում,

-քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող փորձաքննությունների իրականացման ոլորտում ժամանակակից գիտափորձնական մեթոդների, գիտատեխնիկական միջոցների մշակում, փորձարկում և ներդրում,

-փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցում և վերապատրաստում կազմակերպելու նպատակով համապատասխան գիտաուսումնական աշխատանքների իրականացում,

- փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստման և կատարելագործման նպատակով համապատասխան գիտաուսումնական աշխատանքների իրականացում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց որակավորման հավաստում,
-պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերի քրեաբանական հետազոտությունների կատարում,
-իրավաստեղծ լիազորություններ ունեցող մարմինների որոշմամբ իրավական ակտերի նախագծերի քրեաբանական փորձաքննությունների կազմակերպում և իրականացում,
-քրեաբանական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ վիճակագրական, տնտեսագիտական, հոգեբանական, քաղաքագիտական, սոցիոլոգիական և հասարակական այլ գիտությունների բնագավառներում հարցումների, մշակումների, վերլուծությունների կազմակերպում,
-զանգվածային լրատվամիջոցների կողմից նախապատրաստվող հաղորդումների, հրապարակումների քրեաբանական հետազոտությունների կատարում:

4. Աշխատանքի բովանդակությունը՝

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 2015թ-ի ընթացքում նախատեսում է առաջնահերթ իրականացնել դատական փորձաքննությունների կազմակերպման և կատարման գիտական ապահովմանը նպատակաուղղված աշխատանքներ: Նշված աշխատանքների իրականացումը մեծապես կնպաստի նաև հայ-ամերիկյան (INL) միջկառավարական ծրագրի կատարման ապահովմանը: Վերոնշյալ աշխատանքների պատշաճ կատարման համար սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել համապատասխան գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական և գիտաուսումնական բնույթի միջոցառումներ:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում՝ հաստատված կառուցվածքի և հաստիքացուցակի, 2015 թվականին 29 փորձագիտական տեսակներով գործելու են 20 փորձագիտական բաժիններ՝ ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական, սննդամթերքի և խմիչքների, հողագիտական և կենսաբանական, ձգաբանական, հետքաբանական, ձեռագրաբանական, հեղինակային և փաստաթղթաբանական, ՃՏՊ հանգամանքների, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և տրանսպորտահետքաբանական, պայթյունատեխնիկական և հրդեհատեխնիկական, տնտեսագիտական և հաշվապահական, շինարարատեխնիկական, ճարտարագիտատեխնիկական, ապրանքագիտական, ֆոտոտեխնիկական, դիմանկարային տեսա- և աուդիոձայնագրական, մշակութաբանական, համակարգչատեխնիկական, հոգեբանական, էկոլոգիական, դատաբժշկական, բժշկակենսաբանական, դեպքի վայրի փորձաքննությունների և Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնը:

Այսպիսով, կազմակերպությունում 2015թ-ի ընթացքում իրականացվելու են գիտամեթոդաբանական, գիտահետազոտական, գիտագործնական, գիտափորձնական-վերլուծական և գիտաուսումնական բնույթի հետևյալ հիմնական աշխատանքները.

• **Գիտամեթոդաբանական բնույթի աշխատանքներ.**

2015թ-ի ընթացքում կազմակերպությունը ակնկալում է տեսականու՝ ըստ առանձին փորձագիտական ենթատեսակների և տեխնոլոգիական ուղղությունների, ինչպես նաև ծավալների որոշակի աճ, ինչն ակնհայտորեն պայմանավորված է

գիտական գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացմամբ, փորձագիտական նոր տեխնոլոգիական ուղղությունների զարգացման և ներդրման գործում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից որդեգրված ակտիվ քաղաքականությամբ:

Կազմակերպության գիտական անձնակազմի կողմից նախանշվել են դատական փորձագիտության, քրեագիտության և քրեաբանության բնագավառներին առնչվող մի շարք արդիական նոր գիտամեթոդաբանական բնույթի աշխատանքներ, այդ թվում՝

-«Դատատեխնիկական փորձաքննությունների իրականացման ժամանակ աշխատանքի անվտանգության ուսուցման կազմակերպման վերաբերյալ Միջպետական Ստանդարտի պահանջներին համապատասխան ծրագրի մշակում» /թեմայի ղեկավար՝ Ա. Բաղեյան/,

-«Բժշկակենսաբանական փորձաքննությունների բնագավառում իրեղեն ապացույցների վարվեցողակարգի մշակումը» /թեմայի ղեկավար՝ Ա. Իսահակյան/,

-«ԱՊՊԱ ոլորտում ելակետային տվյալների և պատահարների հանգամանքների պարզաբանման և փորձաքննությունների գնահատման նոր մոտեցումների մշակում» / թեմայի ղեկավարներ՝ Հ.Սիմոնյան և Հ.Այվազյան/,

-«Շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն ազդեցության էկոլոգիական գնահատումն ու մեթոդական ապահովումը» /թեմայի ղեկավար՝ Ա. Սանթրոսյան/,

-«Տրամաբանական մակարդակով վնասված ֆայլային համակարգերից տեղեկատվության հայտնաբերման, վերականգնման և ընթեռնելի դարձնելու մեթոդների ընդհանրացում և նոր մեթոդների մշակում» /թեմայի ղեկավար՝ Հ. Հերթեցյան/:

Պետք է նաև նշել, որ 2015թ-ին շարունակվելու է նաև գիտամեթոդաբանական բնույթի աշխատանքների իրականացումը նախորդ տարիներին նախանշված մի շարք արդիական գիտական ուղղություններով, այդ թվում՝

-«Տեսանյութերից ստացված տեսապատկերներով անձի նույնականացում՝ հաբիդասկոպիա» /թեմայի ղեկավար՝ Ս. Բաղալով/,

-«Սերվիտուտի հասկացությունը և օրենսդրական դաշտի կարգավորման ընդհանուր դրույթները մի շարք երկրներում և Հայաստանի Հանրապետությունում» /թեմայի ղեկավար՝ Վ.Առուստամյան/,

-«Դատագենետիկական փորձաքննությունների իրականացման մեթոդների և ԴՆԹ-ի տվյալների բազայի ստեղծման աշխատանքների կազմակերպումը» /թեմայի ղեկավարներ՝ Ա. Հովհաննիսյան, Ն. Խաչատրյան/,

-«Ձեռագրաբանությանը վերաբերող գրականության նոր աղբյուրների ուսումնասիրություն և դրանց արտացոլված նորույթների ամրագրում ձեռագրաբանական փորձաքննությունների կատարման մեջ» /թեմայի ղեկավար՝ Մ. Կարապետյան/,

-«Հրդեհի առաջացման ժամանակի և այրման տևողության որոշման ժամանակակից մեթոդները» /թեմայի ղեկավար՝ Դ. Մելքումյան/,

-«Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և ներմուծվող սննդային ապրանքատեսակների հնարավոր մանրէաբանական աղտոտվածության որոշման արդի գիտական մեթոդների ուսումնասիրում, տեղայնացում և ներդրում» /թեմայի ղեկավար՝ Թ.Ավետիսյան/,

-«Դիակի կենսամիջավայրերում (արյուն, մեզ, մազ, հյուսվածքներ և ներքին օրգաններ) թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հայտնաբերման և նույնականացման եղանակների և համապատասխան մեթոդիկաների վերլուծությունը և մշակումը» /թեմայի ղեկավար՝ Ա.Մանվելյան/,

- «Հայաստանի Հանրապետությունում տեխնոգեն և անտրոպոգեն հողաշերտերում ոչ

հողային ծագում ունեցող ներամփոփումների /օբյեկտների/ հետազոտության ժամանակ փորձագիտական մեթոդների կիրառման հնարավորությունները» /թեմայի ղեկավար՝ Ս. Հարությունյան/,
-«Ծանր մետաղների պարունակության որոշումը Հայաստանի Հանրապետության տարբեր ռեգիոնների ճանապարհամերձ հողային շերտում» /թեմայի ղեկավար՝ Կ.Ղարաջյան/:

Կարևոր է նշել, որ կազմակերպությունը՝ հանդիսանալով Դատափորձագիտական Ինստիտուտների Եվրոպական Ցանցի (ENFSI) լիիրավ անդամ, մասնակցում է «Փորձագիտական աշխատանքային խմբեր»-ի (FWG) 12 փորձագիտական ստորաբաժանումների աշխատանքներին և 2015թ-ին նախատեսում է շարունակել միջազգային պրակտիկայում ընդունված փորձագիտական մեթոդների և մեթոդիկաների ձեռքբերման և դրանց ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչը մեծապես կնպաստի իրականացվող փորձաքննությունների որակի շարունակական բարելավմանը և արժանահավատության բարձրացմանը:

• Գիտահետազոտական բնույթի աշխատանքներ.

2015թ. ընթացքում կազմակերպության գիտական անձնակազմի կողմից նախանշվել են դատական փորձագիտության, քրեագիտության և քրեաբանության բնագավառներին առնչվող մի շարք արդիական նոր գիտահետազոտական բնույթի աշխատանքներ, այդ թվում՝
-«Պատմամշակութային անշարժ հուշարձանների փորձաքննության կատարումը ըստ տեսակների ու կատեգորիաների» /թեմայի ղեկավար՝ Է.Ավանեսով/,
- «Հայաստանի Հանրապետությունում տարածված լայնատերև ծառատեսակների տերևների մորֆոլոգիական և անատոմիական հատկանիշների հետազոտություն» /թեմայի ղեկավար՝ Ս. Հարությունյան/,
- «Միտոքոնդրիալ OXPHOS հիվանդությունների մոլեկուլային պաթոգենեզը» /թեմայի ղեկավար՝ Ա. Հովհաննիսյան/,
-«Մահվան անմիջական պատճառների, հիմնական հիվանդությունների տեսակների վերլուծություն ըստ Փորձաքննությունների ազգային բյուրոյի ախտաբանական կենտրոնի 2008-2014թթ. նյութերի» /թեմայի ղեկավար՝ Ա. Հովսեփյան/,
-«Տեղակալված 1,4-դիօքսանոնների սինթեզը և նրանց կիրառումը էկոլոգիական ու փորձագիտական ոլորտներում» /թեմայի ղեկավար՝ Ս.Հակոբյան/
-«Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների ընթացքում տուժողի հոգեվիճակի ախտորոշման առանձնահատկությունները» /թեմայի ղեկավար՝ Մ.Պետրոսյան/,
-«Պարտապանի ղեկավարի, հավասարապես՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծման կամ սեփական կամ այլ անձանց շահերից ելնելով դրանց չափի ավելացման գծով նախապատրաստված նյութերով կամ արդեն իսկ հարուցված քրեական գործերով (ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդված) նշանակված փորձաքննությունների կատարման առանձնահատկությունները» /թեմայի ղեկավարներ՝ Ե. Զաղոյան, Վ.Առուստամյան/:

2015թ. ընթացքում շարունակվելու են նաև աշխատանքները դեռևս նախորդ տարիներին սկսված գիտահետազոտական բնույթի ուղղություններով, այդ թվում՝
- «Բուսական ծխախառնուրդների և դրանցում պարունակվող առավել տարածված սինթետիկ կաննաբինոիդների փորձագիտական հետազոտություն» /թեմայի ղեկավար՝ Կ. Ղարաջյան/,
- «Ողորկափող հրազեններից կատարված կրակոցների տարածության որոշման առանձնահատկությունները» /թեմայի ղեկավար՝ Ա. Բասենցյան /,

-«Հայաստանի Հանրապետությունում հանցավորության և դրա առանձին տեսակների կրիմինալոգիական և վիկտիմոլոգիական գործոնների բացահայտումը» /թեմայի ղեկավար՝ Ե.Ասատրյան/,

-«Շինարարաճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների կատարման առանձնահատկություններն ըստ բնույթի և անհրաժեշտ ելակետային տվյալների համադրումը՝ ելնելով տվյալ բնագավառի Հայաստանի Հանրապետությունում գործող նորմերի պահանջներից ու փաստացի իրավիճակից» /թեմայի ղեկավար՝ Վ. Սարգսյան/,

-«Ստանդարտ թողարկման փաստաթղթերի /անձնագիր, վարորդական իրավունքի վկայական, ծննդյան վկայականներ և այլն/ կատարման եղանակների համեմատական հետազոտությունը «Regula» փորձագիտական համակարգերի «Frontline document system» /Forensic version/ տեղեկատվության շտեմարանում առկա համապատասխան համեմատական նմուշ փաստաթղթերի հետ» /թեմայի ղեկավար՝ Ա. Բաղդասարյան/:

Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի (հաստատված ՀՀ կառավարության 27.03.2008թ. 1039-Ն որոշմամբ) 10-րդ կետի 47-րդ ենթակետով նախատեսված միջոցառումներն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության 11.06.2009թ. № 638-Ն որոշմամբ կազմակերպության կազմում գործող Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի կողմից կատարվող քրեաբանական հետազոտությունների շրջանակներում 2015թ. ընթացքում շարունակվելու են Հայաստանի Հանրապետությունում հանցավորության և դրա առանձին տեսակների պատճառների և նպաստող պայմանների, դրանց կրիմինալոգիական և վիկտիմոլոգիական գործոնների բացահայտմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես շարունակվելու են դեռևս 2014թ. սկսված բոնի-շահադիտական մոտիվացիայով կատարվող որոշ հանցատեսակների՝ կողոպուտների և ավազակությունների կրիմինալոգիական և վիկտիմոլոգիական գործոնների, դրանց նպաստող պայմանների և զարգացման միտումների բացահայտմանն ուղղված հետազոտական աշխատանքները:

2015թ-ին նախատեսվում է հրատարակել Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի կողմից իրականացված Հայաստանի Հանրապետությունում լատենտային հանցավորության հիմնախնդիրներին նվիրված հետազոտական աշխատությունը: 2015թ-ին նախատեսվում է իրականացնել նաև համապատասխան ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետությունում կանանց հանցավորության հիմնախնդիրների վերաբերյալ՝ հետագայում ՀՀ պենիտենցիար կառույցներում համապատասխան հետազոտություններ իրականացնելու նպատակով:

Հարկ է նշել, որ 2015թ-ի ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում շարունակվելու են իրականացվել աշխատանքներ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Եվրոմիության այլ երկրների, Ռուսաստանի, ինպես նաև 2014թ-ի ընթացքում կնքված համագործակցության պայմանագրերի շրջանակներում ԱՊՀ երկրների դատափորձագիտական և գիտական առաջատար կենտրոնների հետ, ինչը թույլ կտա բարձրացնել հանցագործության դեմ պայքարի արդյունավերտությունը՝ օգտագործելով դատական փորձաքննության ժամանակակից մեթոդները:

• Գիտագործնական բնույթի աշխատանքներ.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական փորձաքննությունների իրականացման գործընթացն իրենից ներկայացնում է գիտագործնական աշխատանքի տեսակ, նախատեսվում է 2015թ-ին կազմակերպել մի շարք գիտագործնական սեմինարներ և խորհրդակցություններ արդի փորձագիտական խնդիրների քննարկման նպատակով: Ընդ որում նախատեսվում է նաև վերջինումս ներգրավել ՀՀ Արդարադատության Նախարարության Փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի, ինչպես նաև հանրապետությունում գործող փորձագիտական այլ կառույցների փորձագետներին՝ համագործակցության և փորձի փոխանակման նպատակով:

Գիտագործնական բնույթի աշխատանքների շրջանակներում շարունակվում է համագործակցությունը ASCLD-ի /American Society of Crime Laboratory Directors/ հետ, մասնավորապես՝ նախատեսվում է 2015թ-ին մասնակցել առցանց կազմակերպվող վեբինարներին, որոնց արդյունքում ակնկալվում են գործնական հմտությունների և կազմակերպչական աշխատանքների զգալի բարելավումներ, գործընկեր կառույցների առաջավոր փորձի հետ ծանոթացում և համագործակցություն:

Կազմակերպությունը 2015թ-ի ընթացքում նախատեսում է համագործակցության պայմանագիր կնքել ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ փորձագիտական կառույցներում ներքին փաստաթղթաշրջանառության և գործընթացների հնարավորինս ավտոմատացման ծրագրային ապահովման ստեղծման և տեղադրման հետ կապված, մասնավորապես իրականացնել գիտագործնական քննարկումներ համատեղ գիտական սեմինարի տեսքով՝ «Փորձագիտական տեղեկատվական բազաների /տվյալների շտեմարանների/ համակարգչային ապահովումը, այդ թվում՝ տեղեկատվության հավաքագրող և որոնողական ծրագրային համակարգերը» և «Տվյալների բազաները «Cloud» միջավայրում պահպանելու, ինչպես նաև կազամկերպության ներքին համակարգչային ցանցը արդիականացնելու նպատակով» թեմաներով:

Հաշվի առնելով, որ 2015թ-ին լրանում է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի հիմնադրման տասնամյակը, կազմակերպությունը նախատեսում է անցկացնել հանրապետությունում եզակի իր բնույթով և բովանդակությամբ երիտասարդ գիտնականների գիտաժողով «Ժամանակակից գիտական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը փորձագիտության ոլորտում» թեմայով, որի արդյունքում հրապարկվելու է գիտական հոդվածների ժողովածու:

•Գիտափորձնական-վերլուծական բնույթի աշխատանքներ.

Կազմակերպության կողմից 2015թ-ի ընթացքում շարունակվելու են իրականացվել փորձագիտական տեղեկատվական բազաների ստեղծմանը և համալրմանը նպատակաուղղված աշխատանքներ, մասնավորապես՝

-2015թ-ին նախանշվել են շարունակել աշխատանքներ մազի, մեզի և կենսաբանական այլ միջավայրերում փորձանմուշների մեջ «սփայս» թմրամիջոցի տեսակի և նրա մեթաբոլիտների հայտնաբերման եղանակների հետ կապված (այդ թվում կիրառելով քրոմատոգրման տարբեր ֆազաներ) վերջիններիս առավել արդյունավետ և հավաստի մեթոդների մշակման նպատակով: Նախատեսվում է նաև զարգացնել կապը Եվրոպական տոքսիկոլոգիական ասոցիացիայի հետ, որը հնարավորություն է ընձեռնում ժամանակակից տեսական գիտելիքների և անհրաժեշտ մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման,

- ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ի և ՄԱԿ-ի Թմրամիջոցների և Հանցավորության Դեմ Պայքարի Գրասենյակի /UNODC/ համագործակցության շրջանակներում 2015թ-ի ընթացքում շարունակվելու են աշխատանքներ իրականացվել թմրամիջոցների և հոգեմետ նյութերի համեմատական և հետազոտելի նմուշների՝ փորձարկումների և տվյալների շտեմարանը համալրելու նպատակով: Առավել կարճ ժամանակահատվածում փորձաքննության ներկայացված անհայտ ծագման նյութերի նույնականացման նպատակով շարունակվելու է թմրանյութերի, հոգեմետ և թունավոր նյութերի տվյալների բազաների համալրումը,

-2015թ-ին շարունակվելու են տվյալների շտեմարանների համալրման աշխատանքները Պետական Էրմիտաժում /ք. Սանկտ-Պետերբուրգ/ առկա համապատասխան տվյալներով, ինչպես նաև ծրագրավորված է ծանոթանալ նկարների ստեղծման ժամկետների հավաստման մեթոդներին և տեխնոլոգիաներին : Մշակութաբանական փորձաքննությունների բաժնում համալրվելու են հայտնի հեղինակների և արտադրողների ոճային և կենսագրական տվյալների առկա շտեմարանները, կազմակերպությունում իրականացվող մշակութային արժեքների փորձաքննությունների ընթացքում ստացվող տվյալների և մասնագիտական գրականությունում առկա տեղեկատվության համադրման, հետազոտման և վերլուծության հիման վրա,

- 2015թ-ին շարունակական բնույթ են կրելու դեռևս նախորդ տարիներին սկսած մի շարք այլ փորձագիտական բազաների ստեղծման (համալրման) աշխատանքները, այդ թվում՝ փամփուշտների և պարկուճների, ներկանյութերի, սառը զենքերի նմուշների, տարբեր մակնիշի մեքենաների անվադողերի և դրանց գծանախշերի, օծանելիքների, օրգանական լուծիչների, կեղծ մետաղադրամների բաղադրությունների, թղթադրամների, գնդիկավոր գրելագործիքների, պայթուցիկ նյութերի արգասիքների և այլն:

• **Գիտաուսումնական բնույթի աշխատանքներ.**

Փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների /նախաքննության, հետաքննության և այլ մարմինների աշխատակիցների/ վերապատրաստման և կատարելագործման դասընթացների առավել որակյալ կազմակերպման և իրականացման ապահովման նպատակով 2015թ-ի ընթացքում նախատեսվում է փորձագիտական տարբեր ուղղություններով և տեսակներով կազմել նոր 12 ծրագիր-սեղմագրեր՝ նորագույն գիտական նվաճումները և միջազգային փորձը հաշվի առնելով, իսկ առկա մինչև 2011թ. կազմված ծրագիր-սեղմագրերից լրամշակել առնվազն 5-ը:

2015թ-ի ընթացքում նախատեսվում է նոր մշակված և լրամշակված ծրագիր-սեղմագրերի կիրառմամբ իրականացնել դասընթացներ ՀՀ ոստիկանության, ՀՀ ՊՆ զորամիավորումների, զորամասերի իրավասու սպաների և ռազմական ոստիկանության իրավասու աշխատակիցների համար, ինչպես նաև ներգրավելով ՀՀ Ֆինանսների նախարարության օպերատիվ հետախուզական և ներքին անվտանգության իրավասու աշխատակիցներին և նորաստեղծ ՀՀ քննչական կոմիտեի քննիչներին:

Փորձագետների և փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստման և կատարելագործման գործընթացի որակյալ կազմակերպման և իրականացման ապահովման նպատակով 2015թ-ի ընթացքում նախատեսվում է շարունակել իրականացնել դասընթացների նոր ծրագիր-առաջարկների մշակման,

ներդրման, ինչպես նաև առկա ծրագիր-առաջարկների լրամշակման աշխատանքներ՝ հաշվի առնելով առկա նորագույն մեթոդներն ու մեթոդիկաները:

2015թ. ընթացքում նախատեսվում է դեռևս 2014թ-ից սկսած փորձագիտության բնագավառի փորձագետների (հավակնորդների) նախնական գիտելիքների ստուգման հարցաշարերի համալրում, նորերի մշակում, հարցերի տեսակավորում (բազային և մասնագիտական) ըստ բարդության աստիճանի և վերապատրաստման (կատարելագործման) փուլերի, ինչպես նաև շարունակել միջազգային փորձի ուսումնասիրությունները մասնագիտական վերապատրաստման մեթոդների բնագավառում՝ դրական փորձը կիրառելով հավակնորդների վերապատրաստման (կատարելագործման) գործընթացքում:

5.Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը Գիտական և ֆինանսական հաշվետվությունների ձևով:

Տնօրեն _____ Արտաշես Զավադյան
(ստորագրություն)

Փաստաթղթի նախապատրաստման
համար պատասխանատուներ՝
տնօրենի տեղեկալ Պ. Ոսկանյան հեռ. 77-77-10 /151/
տնօրենի տեղակալ Ե. Զաղոյան հեռ. 77-77-10 /152, 222/

Հավելված 2
«27» 01 2015թ.
N 2-30 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի /ծրագրի անվանումը/

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ /տարեկան կտրվածքով/					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Գիտամեթոդական բնույթի աշխատանքներ	ներկայացված է հավելված 1-ում	ներկայացված է հավելված 1-ում	ներկայացված է հավելված 1-ում	31.12.2015թ.	198914.5
2	Գիտահետազոտական բնույթի աշխատանքներ	ներկայացված է հավելված 1-ում	ներկայացված է հավելված 1-ում	ներկայացված է հավելված 1-ում	31.12.2015թ.	
3	Գիտագործնական բնույթի աշխատանքներ	ներկայացված է հավելված 1-ում	ներկայացված է հավելված 1-ում	ներկայացված է հավելված 1-ում	31.12.2015թ.	
4	Գիտափորձնական-վերլուծական բնույթի աշխատանքներ	ներկայացված է հավելված 1-ում	ներկայացված է հավելված 1-ում	ներկայացված է հավելված 1-ում	31.12.2015թ.	
5	Գիտաուսումնական բնույթի աշխատանքներ	ներկայացված է հավելված 1-ում	ներկայացված է հավելված 1-ում	ներկայացված է հավելված 1-ում	31.12.2015թ.	
Ընդամենը						198914.5

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան
(ստորագրություն)
ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
Տնօրեն՝ Ա.Ջավադյան
(ստորագրություն)

Հավելված 3
«27» 01 20.. թ.
N Հ-30 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Արտաշես Ջավաղյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 2015 թ. N Հ-30 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 198914.5 հազ. (մեկ հարյուր իննսունութ միլիոն ինը հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 «Արարատ բանկ» ԲԲԸ Հ/հ 1510005175820100 ՀՎՀՀ 00005673 Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան _____ (ստորագրություն) Կ.Տ.	«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ ք. Երևան, Իսակովի 24 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/հ 1930003316710100 ՀՎՀՀ 01836525 Տնօրեն՝ Ա. Ջավաղյան _____ (ստորագրություն) Կ.Տ.

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված 4
«27» 01 2015 թ.
N 2-30 պայմանագրի

Գիտական ծրագրի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձի չափը (ներառյալ եկամտային հարկը)	188196.1	37639.2	84688.2	131737.3	188196.1
2	տնտեսական և այլ ծախսեր	10718.4	2143.7	4823.3	7502.9	10718.4
3	Ընդամենը	198914.5	39782.9	89511.5	139240.2	198914.5

Տնօրեն _____ Ա. Ջավադյան
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____ Նարինե_ Հարությունյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.